**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՎՈՐԼԴ ՎԻԺՆԻԱՅԱՍՏԱՆ»ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

***«ԴՏՊ-11414-11018/23 ՎՎԱԾ»***

Քաղ. Երևան

«1» փետրվարի 2023 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի, ի դեմս գործադիր տնօրեն Ռաֆի Դուդակչյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն (1141)» ծրագրի «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում (11018)» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան և գինը**

1.1. Պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 19, 246, 000 (տասնինը միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով: Ծրագիրը իրականցվում է Արագածոտնի մարզում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 145 (պետական միջոցների հաշվին ծառայություն կտրամադրվի 145 շահառուի, իսկ կազմակերպության միջոցների հաշվին ծառայություն կստանա ևս 55 շահառու) երեխայի համար

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի N 1 հավելվածում: Ծրագիրն իրականցվում է Արագածոտնի մարզում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ամսական 145 երեխայի համար (ամսական):

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակում) պայմանագրում նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը չի կատարվել նվազագույնը 75 %-ով կամ չի ապահովվել շահառուների պլանային թվի նվազագույնը 75 %-ը՝ պայմանագրի 9.7.-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավելի, քան պայմանագրի N 6 հավելվածով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն պայմանագրի N 5 հավելվածի, և հաշվետվությունները՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի, ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություններ՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, և տարեկան հաշվետվություն՝ ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ համաձայն N 2 հավելվածի և N 7 հավելվածում նշված ձևաչափի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.8. պայմանագրի 4.1-ին կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

**3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)**

3.1. Նախարարությունն ըստ պահանջի ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

## 4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (N 5 հավելված) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 4 հավելված) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**7. Պայմանագրի գործողության ժամկետը**

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Եզրափակիչ դրույթներ**

9.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը (N 7 հավելված):

9.2. այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ

որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունն այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերն իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամ |
| Ք. Երևան, կառավարական տուն 3 | ք.Երևան, 0065, Ռոմանոս Մելիքյան 1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ) |
| Հ/Հ 900011030732 | Հ/Հ 220413350723000 |
| ՀՎՀՀ 01506515 | ՀՎՀՀ 1291909 |
| Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Ռաֆի Դուդակլյան |
| ____________________ (ստորագրություն) | ____________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
2023 թվականի փետրվարի __-ին կնքված
«ԴՏՊ-1141-11018/23 ՎՎԱԾ» պայմանագրի

## «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի

## ԱՌԱՋԱՐԿ

### 1. Համառոտագիր

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի իրականցմամբ ՎՎ Հայաստանը նպատակ է հետապնդում աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու խնդիրների լուծմանը: Ծրագրի իրկանացումը մեծապես կնպաստի երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը և շուրջօրյա խնամքի հաստատությունում խնամք ստացող երեխայի վերամիավորմանը կենսաբանական ընտանիքին, ինչպես նաև երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացմանը:

ՎՎ Հայաստանը առաջարկվող Ծրագիրը նախատեսում է իրականացնել 2020թ-ից գործող իր «Նավակ» երեխաների և ընտանիքի զարգացման համայնքային կենտրոնի միջոցով, որը տեղակայված է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում և ունի համապատասխան հավաստագիր: Արտակենտրոն ծառայությունները կտարածվեն Թալին համայնքի մյուս բնակավայրերի ՝ Մաստարայի, Արագածավանի, Թալինի և Արտենիի, երեխաների և նրանց ընտանիքների վրա: Նշված կենտրոնի կողմից տրամադրվող ծառայությունները կենսական նշանակություն ունեն կենտրոն հաճախող երեխաների, ինչպես նաև արտակենտրոն ծառայություններ ստացող երեխաների և նրանց ընտանիքների համար: Կենտրոնների գործունեության հիմնանպատակն է երեխաների երկարաժամկետ զարգացումը: Կենտրոններում մատուցվող ծառայությունները նպաստում են երեխաների սոցիալ-հոգեբանական և կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը, հոգեբանական խնդիրների հաղթահարմանը, ինչպես նաև ծնող-երեխա կապի ամրապնդմանը և ծնողների ծնողավարության, կենցավարության, ֆինանսական գրագիտության զարգացմանը:

Ըստ էության նշյալ ծառայությունները կարևոր դերակատարում ունեն նաև երեխաների ինստիտուցիոնալացման խնդրի լուծման տեսանկյունից, քանի որ հնարավորություն են տալիս վաղ միջամտության շնորհիվ աշխատել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքի հետ և նպաստել առկա խնդիրների լուծմանը:

ՎՎ Հայաստանի ցերեկային կենտրոնները համայնքային մակարդակում կատարում են շատ կարևոր գործառույթ և լուծում առաջնային խնդիր ի շնորհիվ ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ և մասնագիտական մոտեցումների, պետական և ոչ պետական կառույցների, սոցիալական աշխատողների ցանցի, տեղական ՔՀԿ-ների, տեղական իշխանությունների և եկեղեցիների հետ սերտ համագործակցությամբ:

Ծրագրի իրկանացման համար ՎՎ Հայաստանը ունի երեխաներին ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրելու համար համապատասխան փորձ, մասնագիտական անձնակազմ, փորձարկված մեթոդաբանություն, համագործակցության լայն շրջանակ և համապատասխան շենքային և գույքային հնարավորություններ (կահավորված գրասենյակներ, գրականություն, խաղեր, սարքավորումներ և այլ անհրաժեշտ պարագաներ): Հարկ է նշել, սկսած 2020թ. ՎՎ Հայաստանը իրականացրել է նաև պետության կողմից պատվիրակված համանման ծառայություններ:

Ծրագրի իրականացման հաջող ընթացքը, շարունակականությունը և կայունությունը պայմանավորված են ՎՎ Հայաստանի կողմից իրկանացվող բազմաթիվ այլ համանման ծրագրերի իրականացմամբ և արդեն իսկ ստեղծված ինստիտուցիոնալ հենքով: ՎՎ կողմից իրականացվող բոլոր գործողությունները սերտ փոխկապակցված են, փոխլրացնում և կնպաստեն սույն Ծրագրի հաջող իրականացմանը: Մասնավորապես՝ ՀՀ ԱՍՀ նախարարության կողմից հայտարարված մրցույթով նախատեսված և առհասարակ՝ ՀՀ կառավարության 2014թ. 743-Ն որոշման 6-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացումը հիմնված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հետ սոցիալական աշխատանքի արդյունավետ իրականացման վրա, և հաշվի առնելով, որ սույն ծրագրով աշխատանքներ են իրականացվելու նաև շուրջօրյա խնամք ստացող երեխաների և նրանց ընտանիքների հետ, ՎՎ Հայաստան կազմակերպությունը մեծ փորձառություն ունի սոցիալական աշխատանքի ոլորտում, հանդիսանալով ՀՀ-ում համապատասխան մասնագետների պատրաստման, մասնագիտության ներդրման և կայացման, ինչպես նաև պրակտիկ դաշտում այն կիրառելու գործում: Մասնավորապես՝ ապաինստիտուցիոնալացման գործընթացում ունեցած մեծ փորձը կնպաստի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը կենսաբանական ընտանիքին վերամիավորմանը, վաղ հայտնաբերման և միջամտության շնորհիվ երեխայի մուտքը շուրջօրյա հաստատություններ կանխարգելմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին սոցիալ-հոգեբանական, զարգացումն ապահովող ծառայությունների տրամադրմանը հաշվի առնելով, որ ՎՎՀ-ի կողմից ԵՄ կողմից համաֆինանսավորվող FESCCA ծրագիրն (մանրամասները «Կազմակերպության փորձառությունը բաժնում») իրականացվել է ՀՀ օրենսդրությանը, պետական քաղաքականության հիմնական ուղղություններին համահունչ և նպաստել է տարբեր դերակատրների միջև համագործակցության մշակույթի ձևավորմանը: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող CLASS ծրագրի (մանրամասները «Կազմակերպության փորձառությունը բաժնում») փորձառությունը թույլ կտա Ծրագիրը արդյունավետ կերպով իրականացնել համայնքային սոցիալական աշխատողների անմիջական ներգրավմամբ՝ նպաստելով վերջիններիս՝ երեխայի պաշտպանության ոլորտի հմտությունների զարգացմանը, համայնքային ռեսուրսների արդյունավետ ներգրավմանը և ուղղորդմանը, այլ դերակատարների հետ համագործակցության ձևավորմանը, ինչպես նաև կնպաստի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերմանը:

Նախկին տարիներին պետական պատվիրակման միջոցով ցերեկային խնամքի ծառայությունների մատուցման փորձառությունը (մանրամասները «Կազմակերպության փորձառությունը բաժնում») հիմք կհանդիսանա երեխաներին սոցիալ հոգեբանական, սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցմանը, ընտանիքների հետ արդյունավետ սոցիալական աշխատանքի իրականացմանը, ուղղորդմանը և խորհրդատվությանը: ՎՎ Հայաստանի ցերեկային խնամքի կենտրոններում երեխաներին սննդի տրամադրման փորձառությունը հնարավորություն կտա ապահովել Ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումը՝ համապատասխան չափորոշիչներին և անվտանգության կանոններին համապատասխան:

ՎՎ Հայաստանի երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի փորձառությունը թույլ կտա սույն Ծրագրի իրականացման ընթացքում վեր հանել համակարգային խնդիրները, որոնք խոչընդոտ են հանդիսանում երեխայի պաշտպանության համակարգի զարգացման համար, մշակել արդյունավետ առաջարկներ և համակարգային լուծումներ առաջարկել պատասխանատու գերատեսչություններին՝ նպաստելով պետական քաղաքականության արդյունավետ իրականացմանը:

## 2. Ծրագրի նկարագրություն

### *2.1. Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում*

Չնայած վերջին տասնամյակի շարունակական սոցիալական և տնտեսական ձեռքբերումներին, երեխաների վիճակը Հայաստանում շարունակում է մնալ մտահոգիչ: Աղքատությամբ, ներկայիս հայ-ադրբեջանական սահմանային լարվածությամբ, Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմի կործանարար հետևանքով ՝ ծառացել են մի շարք դժվարություններ և խնդիրներ, որոնք անհաղթահարելի են բազմաթիվ առավել խոցելի ընտանիքների և նրանց երեխաների համար:

2020թ.-ին աղքատության մակարդակը ըստ պաշտոնական վիճակագրության[1] գնահատվել է 27%, որը 0.6% տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա 26.4%-ից (հաշվարկված ըստ աղքատության միջին գծի): Ծայրահեղ աղքատ է համարվում բնակչության 0.7%-ը: Աղքատության մակարդակը քաղաքային բնակավայրերում կազմել է 48.9%՝ այդ թվում ք. Երևանում՝ 21%, այնինչ գյուղական բնակավայրերում՝ 51.1%: ՀՀ Արագածոտնի մարզում աղքատության ցուցանիշը կազմում է 32.9%: Ըստ այս ցուցանիշների Հայաստանի յուրաքանչյուր չորրորդ չափահաս (27%) շարունակել է ապրել աղքատության միջին գծից ցածր՝ քաղաք-գյուղ զգալի անհամամասնություններով: Պարենային անվտանգությունն ուղղակիորեն կապված է աղքատության հետ: Սննդի անվտանգության և խոցելիության 4-րդ համազգային գնահատումը[2] (FSVA4), որն իրականացվել է 2022 թվականի մայիս-հունիս ամիսներին (ՊՀԾ), ցույց է տալիս, որ տնային տնտեսությունների միայն 20%-ն է ապահովված սննդամթերքով, իսկ 57%-ը սահմանային սննդով ապահովված է: Ադրբեջանի կողմից հակամարտության հետագա սրման և գյուղատնտեսական գործունեության սահմանափակումների և պարենային և էներգակիրների գների շարունակական աճի դեպքում Հայաստանում պարենային անապահովությունը կարող է 21,4-ից հասնել 29,7% (20% գնաճի սցենարի դեպքում) և աղքատության միջին մակարդակը 27%-ից զգալիորեն կաճի հասնելով 39,6%-ի:

Ըստ Վորլդ Վիժն Հայաստնի կատարած գնահատման (2020)՝ Հայաստանում ապրող երեխաների և նրանց ընտանիքների (իրականացվել է ՀՀ 6 մարզերում և Երևանում), համավարակի բռնկումից հետո ամեն 4-րդ ընտանիքն ունի անկանոն եկամտի աղբյուր, հաճախ ծնողներն ի վիճակի չեն օգնել երեխաներին և բավարար ուշադրություն հատկացնել նրանց կրթությանը՝ խոցելիության պատճառով առաջացած իրենց հատուկ մտածելակերպի պատճառով: Ծնողների հիմնական մտահոգությունը և խնդիրը հանդիսանում է ընտանիքի գոյատևումն ապահովող նվազագույն պայմանների բավարարումը և ժամանակ և ռեսուրս չունի երեխաների կրթության, բնականոն զարգացմանը ուշադրություն դարձնելու համար, ինչն էլ հանգեցնում է ծնողավարման և կյանքի հմտությունների զարգացման խնդիրների:

Բացի վերոնշյալից, Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը, 2019-2022 թվականներին ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացրել է «Ընտանեկան միջավայր և հասանելի համայնքային ծառայություններ Հայաստանի երեխաների համար» (FESCCA) ծրագիրը՝ երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների և ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման ընթացքում սերտորեն համագործակցելով ՀՀ ԱՍՀ նախարարության հետ, որի ընթացքում ՎՀՀ-ի անմիջական ջանքերի շնորհիվ վերակազմակերպվել են երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող մի շարք կազմակերպություններ: Հաստատությունների վերակազմակերպման ընթացքում այնտեղ խնամք ստացող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների գնահատման ընթացքում ակնհայտ է դարձել, որ երեխաների մեծամասնությունը շուրջօրյա խնամքի հաստատությունում տեղավորվել են ընտանիքի սոցիալական վատ պայմանների, ծնողների ծնողավարման հմտությունների բացակայության, երեխայի զարգացման համար անհրաժեշտ համայնքային ծառայությունների բացակայության, հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար վերականգնողական ծառայությունների բացակայության, երեխայի պաշտպանության համակարգի տարբեր դերակատարների միջև վատ համագործակցության, հանրության մեջ ձևավորված որոշակի ձևավորված արատավոր մոտեցումների և սոցիալական աշխատանքի ոչ արդյունավետ իրականացման պատճառով, մինչդեռ նշյալ խնդիրների մեծ մասը

հնարավոր կլիներ լուծել և երեխաների խնամքն ընտանիքում կազմակերպել համայնքային ծառայությունների առկայության, մասնագիտական վաղ միջամտության և կանխարգելման միջոցով:

---

[1] https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf

[2] WFP, Fourth Food Security and Vulnerability Assessment in Armenia

Հաշվի առնելով վերոգրյալը, սույն Ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հետ արդյունավետ աշխատանքի, երեխաների համար կրթության, բնականոն զարգացման և սոցիալականացման ապահովմանն ուղղված ծառայությունների ներդնման և զարգացման, երեխայի ընտանիքում ապրելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և ապահովելու, երեխաների մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ ապահովելու, երեխայի հետ աշխատող տարբեր դերակատարների միջև սերտ համագործակցային հարաբերություններ հաստատելու և երեխայի՝ ընտանիքում ապրելու վերաբերյալ հանրության մոտեցումների փոփոխության համար: Ծրագիրը նպատակ ունի իր ծառայությունների միջոցով մեղմելու կամ ամբողջապես հաղթահարելու նաև ԿԴԻՀ երեխաների ընտանիքների խոցելի վիճակը:

## 2.2. *<u>Ներկա վիճակը ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում և ծրագրի անհրաժեշտության հիմնավորումը</u>*

ՀՀ Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արմտյան հատվածում: Այն ընդգրկում է Աշտարակի, Թալինի, Ապարանի և Արագածի նախկին շրջանները, բնակչությունը 161774 մարդ[3]: Մարզն ունի մոտ 350կմ միջպետական սահման, որից 300կմ-ը Ադրբեջանի Հանրապետության հետ, 50-ը՝ Վրաստանի: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2020թ.-ին Արագածոտնի մարզում աղքատությունը կազմում է 32.9%[4]:

Թալին համայնքն ընդգրկում է Թալինի քաղաքային և 35 գյուղական բնակավայրեր: Բնակչության թիվը՝ 27163 (01.01.2022թ.դրությամբ):

ՎՎ Հայաստանի Թալինի տարածքային գրասենյակը բացվել է 2005թ.-ին: Այս տարիների ընթացքում կազմակերպության շահառու են հանդիսացել 6000-ից ավելի առավել խոցելի ընտանիքներ: Ըստ ՎՎ սոցիալական աշխատողների կողմից տեղական գործընկերների միջոցով իրականացված նախնական քարտեզագրման (ՄՍԾ Թալինի տարածքային գրասենյակ, համայնքային սոցիալական աշխատող, ուսումնական հաստատություններ և այլն) Թալին համայնքում հաստատություններում հայտնվելու վտանգի տակ են 50 երեխաներ (մեկ ծնողի խնամքի տակ գտնվող, ծնողն ունի հաշմանդամություն, ծայրահեղ աղքատ, ծնողական խնամքից զուրկ, անտեսված, ֆիզ. և հոգեբանական բռնության ենթարկվող, կենցաղային վատթար պայմաններում ապրող և այլն), իսկ սույն ծրագրով ներառված խնամքի հաստատություններում գտնվում են 7 երեխաներ:

Հաշվի առնելով, որ Թալինի քաղաքային համայնքից բացի երեխայակենտրոն ծառայություններ ստանալու կարիք կա նաև հարևան Մաստարա, Արտենի և Արագած բնակավայրերում, Վորլդ Վիժն Հայաստանի Թալինի տարածքային գրասենյակը 2019թ.-ից ծառայություններ սկսեցին մատուցել նաև այդ բնակավայրերում: 2020թ.ից գործող Թալինի «Նավակ» երեխաների և ընտանիքի զարգացման համայնքային կենտրոնում մինչ օրս ծառայություն են ստացել 120-ից ավելի առավել խոցելի երեխաներ:

## 3. Գործողություններ

«երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում նախատեսվող հիմնական գործողություններն են.



| Գործողությունը | Իրականացման մեթոդաբանություն |
|---|---|
| **Շահառուների ընտրություն, կարիքի գնահատում, ԱՍԾ-ների կազմում** | |
| **1. Շահառուների ընտրություն, կարիքի նախնական գնահատում** | Շահառուների ընտրությունն իրականացվելու է համայնքային և մարզային մարմինների ու շահագրգիռ բոլոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ ապահովելու երեխայի հաստատությունում հայտնվելու ռիսկի գնահատումը, իսկ հաստատությունում խնամք և դաստիարակություն ստացող երեխայի պարագայում՝ վերամիավորումը: Շահառուների ընտրությունն իրականացվելու է ՎՎ Հայաստանի տարիներով ստեղծված և պարբերաբար թարմացվող տվյալների բազայի, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների տվյալների բազայի հիման վրա և Միասնական սոցիալական ծառայությունների (ՄՍԾ) տարածքային կենտրոնների, համայնքային սոցիալական աշխատողների հետ սերտ համագործակցությամբ: Նման մոտեցումը թույլ կտա առավել մեծ թվով երեխաների կարիքների գնահատում իրականացնել: Բոլոր գնահատման արդյունքները կպահպանվեն կազմակերպությունում:<br>Գնահատման և Ծրագրում ընդգրկելու գործընթացը կիրականացվի ՀՀ կառավարության 2018 թ., դեկտեմբերի 13-ի 1444-Ն որոշման և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան:<br>Գնահատման գործընթացը, շահառուների ընտրությունը և ծառայությունների տրամադրումը կկազմակերպվի ՎՎՀ-ի կողմից մշակված և փորձարկված մեթոդաբանության համաձայն՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 743-Ն որոշմամբ:<br>Շահառուները կընդգրկվեն կազմակերպության բազմամասնագիտական խմբի եզրակացության և ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ կքնված պայմանագրի հիման վրա: |
| **2. Երեխայի կարիքների խորքային գնահատման հիման վրա չափելի նպատակադրումներ սահմանում, անհատական սոցիալական ծրագրի (ԱՍԾ) մշակում** | Ընտրված Շահառուների համար կիրականացվի կարիքի խորքային գնահատում՝ հաշվի առնելով երեխայի հուզակամային վիճակը, զարգացման և կրթական մակարդակի համապատասխանությունը երեխայի տարիքին և սեռին, ֆիզիոլոգիական վիճակը, ուսման, հաղորդակցման, սոցիալական կապերի ձևավորման ունակությունները, կրթություն ստանալու ցանկությունը և հնարավորությունները (ֆիզիկական և տնտեսական մատչելիություն), մասնագիտական կողմնորոշումը և այլն: Միևնույն ժամանակ կգնահատավեն նաև երեխայի ընտանիքի կարիքները հաստատությունում խնամք ստացող երեխաների վերամիավորումն ապահովելու, ինչպես նաև ընտանիքում նրա խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու նպատակով: Գնահատման հիման վրա կմշակվեն **անհատական սոցիալական ծրագրեր (ԱՍԾ)**, որոնք հիմնականում կներառեն երեխայի պահանջմունքները, գնահատված սոցիալական կարիքները և առաջարկվող միջոցառումները (բերված են ստորև), դրանցից յուրաքանչյուրի իրականացման համար դերաբաշխումը, դրանց ծավալները, ժամկետները և ակնկալվող արդյունքները: Ծրագրերը կարող է փոփոխության ենթարկվել՝ շարունակաբար իրականացվող սոցիալական կարիքների ընթացիկ գնահատման արդյունքների (սոցիալական կարիքների նվազում, փոփոխություններ, խորացում) հիման վրա: 1444_Ն |
| **Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում (կենտրոնում[5] և արտակենտրոն[6])** | |

[5] Երեխան փաստացի ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում կապահովվի սննդով (սննդային փաթեթը մեկ երեխայի հաշվով կներառի հյութ, թխվածքաբլիթ և միրգ):

[6] Արտակենտրոն ծառայությունների տրամադրումը կկիրառվի այն դեպքերում եթե կենտրոն այցելելու հետ կան դժվարություններ, եթե մասնագետների գնահատմամբ դա բխում է երեխայի շահից և այն փուլում, երբ երեխան դեռևս խնամք է ստանում շուրջօրյա խնամքի հաստատությունում: Բոլոր դեպքերում կներդրվեն ջանքեր երեխայի կենտրոն հաճախելու գործընթացն ապահովելու նպատակով՝ այդպսով կանխելով սոցիալական մեկուսացումը երեխայի՝ շուրջօրյա խնամքի հաստատությունում խնամք ստանալու հանգամանքից:

| | |
|---|---|
| ✓ **Կյանքի հմտությունների զարգացման խմբակներ -** Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում ըստ տարիքային խմբերի<br><br>*Խմբակներն իրականացվում են ըստ երկու փարիքային խմբերի՝ կրտսեր (6-10տ) և միջին (11-14տ): Սովորաբար յուրաքանչյուր խմբում ընդգրկված է 12-15 երեխա: Ծրագրի ողջ ընթացքում միաժամանակ կունենաք 4 խումբ՝ երկուական ըստ փարիքային խմբերի:* | Նպատակն է զարգացնել երեխաների հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցման հմտությունները, նպաստել հակասոցիալական վարքի դրսևորման մեղմացմանը, ինքնարտահայտման ունակությունների զարգացմանը: Պարապմունքը վարում է կյանքի հմտությունների խմբակավարը՝ նախապես տրամադրած մոդուլներով, նյութերով և օրակարգով (Հավելված 2. Մոդուլներ): Խմբակի հանդիպումների ընթացքում խմբակավարներն օգնում են երեխաներին ապահովել ներառականությունը խմբի ներսում, արտահայտել իրենց կարծիքը, ձեռք բերել հասակակիցների հետ շփման հմտություններ, ունենալ գիտելիքներ հիգիենայի կանոնների վերաբերյալ, սովորել լինել ընկերասեր, հոգատար, պատասխանատու:<br>Վերը նշված հանդիպումների ընթացքում երեխաները նաև գեղագիտական դաստիարակության (նկարչություն, ապլիկացիա և այլն), ընթերցանության (գրքերի ընթերցում, քննարկում, բեմադրում և այլն), ինտելեկտուալ/զարգացման խաղերի պարապմունքներ են ունենում: |
| ✓ մասնագիտական կողմնորոշում<br><br>*Շաբաթական երկու անգամ 1-1,5 ժամ փևողությամբ: :<br>Ծրագրի ողջ ընթացքում կունենաք 2 խումբ, յուր. խմբում 10-12 երեխա<br>Հանդիպումների ընդհանուր թիվը կկազմի 12-14 անգամ:* | 13-18 տ երեխաների երեխաների համար կիրականցվի մասնագիտական կողմնորոշման դասընթաց՝ հատուկ մշակված մոդուլով, ինտերակտիվ մեթոդաբանությամբ (Հավելված 2. Մոդուլներ): Դասընթացը կիրականցվի կենտրոնի խմբակավարի կողմից: Երեխաները հնարավորություն կունենան հանդիպել տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց և քննարկել տվյալ մասնագիտության առավելությունները և առանձնահատկությունները: |
| ✓ արտթերապևտիկ ծառայություն<br><br>*Շաբաթական երկու անգամ 1-1,5 ժամ փևողությամբ:<br>Ծրագրի ողջ ընթացքում կունենաք 2 խումբ, յուր. խմբում 10-12 երեխա* | Երեխայի հոգեբանական խնդիրների լուծման համար կկիրառվեն տարբեր արտթերապևտիկ միջամտություններ:<br>Անհատական և խմբային հանդիպումների միջոցով լուծում է երեխաների մոտ առկա տարբեր վարքային, հոգեբանական խնդիրները: Աշխատանք է իրականացվում այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են մանկական վախերը, վարքային խնդիրները, վնասակար սովորությունները, գերակտիվությունը, ցածր ինքնագնահատականը, հարազատի կորուստը: Խմբային հանդիպումները կազմակերպվում են շփման դժվարություններ ունեցող երեխաների հետ, ցածր ինքնագնահատական ունեցող դեռահասների հետ: Երեխաների հետ կկիրառվեն արտթերապևտիկ<br><br>տարբեր հնարքներ, այդ թվում նկարչություն, տիկնիկագործություն, թատերական ներկայացումներ և այլն: |
